



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/11635

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից պատիվ ունի հաստատելու 2018 թվականի օգոստոսի 24-ին հետևյալ բովանդակությամբ հմ. 15-68215/3557 հայտագրի ստացումը.

«Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը և հայտնում հետևյալը:

Ձգտելով ստեղծել 2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ «Ղազախստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» Կոնվենցիայի և դրան կից Արձանագրության շրջանակներում պաշտոնական փաստաթղթերի ճանաչման հարցերով համագործակցության արդյունավետ և պարզեցված մեխանիզմ՝ Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը (այսուհետև՝ Կողմեր) առաջարկում է սահմանել հետևյալը.

1. Մի Կողմի պետության լիազոր մարմնի կողմից տրված և նրա զինանշանի պատկերն ունեցող կնիքով ամրագրված փաստաթղթերը մյուս Կողմի պետության տարածքում ընդունվում են առանց որևէ հատուկ հավաստման, այդ թվում՝ ապոստիլի կամ հյուպատոսական օրինականացման: Այդպիսի փաստաթղթերը, որոնք

մի Կողմի պետության տարածքում դիտարկվում են որպես պաշտոնական, մյուս Կողմի պետության տարածքում ունեն պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժ: Ճանաչման տվյալ կարգը կիրառվում է Կողմերի պետությունների լիազոր մարմինների կողմից 2012 թվականի հունվարի 1-ից տրված պաշտոնական փաստաթղթերի նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճ ու տարաձայնություն Կողմերը լուծում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

3. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը չի դադարեցրել դրա գործողությունը: Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարին լրանալուց հետո՝ ընթացիկ օրացուցային տարվա ավարտից առնվազն 6 (վեց) ամիս առաջ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Նման դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է այն տարվա հունվարի 1-ից, որը հաջորդում է այդպիսի ծանուցումն ստանալու տարվան:

4. Վերոշարադրյալի առնչությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարության համաձայնության դեպքում Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Ղազախստանի Հանրապետության Կառավարության անունից պատիվ ունի առաջարկելու սույն հայտագիրն ու Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պատասխան հայտագիրը դիտարկել հայտագրերի փոխանակման ձևով Համաձայնագիր 2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ «Ղազախստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» Կոնվենցիայի և դրան կից Արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի մասին, որն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:



ҚАЗАҚСТАН РЕСПУБЛИКАСЫ

СЫРТҚЫ ІСТЕР

МИНИСТРЛІГІ

№15-68215/3557

Министерство иностранных дел Республики Казахстан свидетельствует свое уважение Министерству иностранных дел Республики Армения и имеет честь сообщить следующее.

Стремясь создать эффективный и упрощенный механизм сотрудничества в рамках Конвенции между Правительством Республики Казахстан и Правительством Республики Армения об избежании двойного налогообложения и предотвращении уклонения от налогообложения в отношении налогов на доходы и на имущество и Протокола к ней от 6 ноября 2006 года по вопросам признания официальных документов, Правительство Республики Казахстан предлагает Правительству Республики Армения (далее – Стороны) определить следующее.

1. Документы, выданные уполномоченным органом государства одной Стороны и скрепленные его гербовой печатью, принимаются на территории государства другой Стороны без какого-либо специального удостоверения, в том числе апостилирования или консульской легализации. Такие документы, рассматриваемые на территории государства одной Стороны как официальные, пользуются на территории государства другой Стороны доказательной силой официальных документов. Данный порядок признания применяется к официальным документам, выданным уполномоченными органами государств Сторон с 1 января 2012 года.

2. Любые споры и разногласия относительно толкования или применения положений настоящего Соглашения разрешаются Сторонами путем консультаций и переговоров.

**МИНИСТЕРСТВО ИНОСТРАННЫХ ДЕЛ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

г.Ереван

3. Настоящее Соглашение заключается на неопределенный срок и остается в силе до тех пор, пока одна из Сторон не прекратит его действие. Каждая Сторона может прекратить действие настоящего Соглашения после окончания 5 лет со дня вступления в силу настоящего Соглашения, письменно уведомив по дипломатическим каналам о своем намерении прекратить его действие не менее чем за 6 (шесть) месяцев до окончания текущего календарного года.

В этом случае настоящее Соглашение прекращает свое действие с 1 января года, следующего за годом, в котором было получено такое уведомление.

4. В случае согласия Правительства Республики Армения с вышеизложенным Министерство иностранных дел Республики Казахстан от имени Правительства Республики Казахстан имеет честь предложить считать настоящую ноту и ответную ноту Министерства иностранных дел Республики Армения Соглашением в форме обмена нотами о порядке признания официальных документов, подтверждающих резидентство, выданных уполномоченными органами Республики Казахстан и Республики Армения в рамках Конвенции между Правительством Республики Казахстан и Правительством Республики Армения об избежании двойного налогообложения и предотвращении уклонения от налогообложения в отношении налогов на доходы и на имущество и Протокола к ней от 6 ноября 2006 года, которое вступает в силу с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

Министерство иностранных дел Республики Казахстан пользуется случаем, чтобы возобновить Министерству иностранных дел Республики Армения уверения в своем высоком уважении.

«22» августа 2018 года, город Астана



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. օգոստոսի 22-ին և 2018թ. նոյեմբերի 1-ին հայտագրերի փոխանակման ձևով կնքված «2006թ. նոյեմբերի 6-ի՝ «Ղազախստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի և դրան կից արձանագրության շրջանակներում Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների կողմից տրված՝ ռեզիդենտությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերի ճանաչման կարգի վերաբերյալ» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝



Տիգրան Գալստյան